Հայաստանի Հանրապետություն
"Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր" (ՈՀԲԾ)
ՎԶՄԲ փոխառության No.՝ 8267AM

ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

«Տեղեկատվական կարճ հեռուստատեսային հոլովակների/հաղորդման պատրաստում» ISEP/IC/SW-14/002

Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել Համաշխարհային բանկից՝ **Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի (ՈՀԲԾ)** ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների համար: Ընտրության գործընթացը ղեկավարվելու է ՀԲ-ի կանոններով և ընթացակարգերով:

Սույնով **«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը** հրավիրում է **«Տեղեկատվական կարճ հեռուստատեսային հոլովակների/ հաղորդման պատրաստում»** ծրագրով խորհրդատվական ծառայությունների իրականացման համար բոլոր շահագրգիռ անձանց («խորհրդատուներ») հայտնել իրենց շահագրգռվածությունը ծառայությունների մատուցման համար:

Խորհրդատուի առաջադրանքը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալ խնդիրներով.

- Պրոֆեսիոնալ թիմով /ոչ ավելի, քան երկու հոգի/, ըստ հրատապության և թեմատիկ բաժանումների, հանրապետության մարզերում կատարել նկարահանումներ, պատրաստել ոռոգման համակարգի բարեփոխումները լուսաբանող հեռուստահաղորդումներ, ապահովել հեռարձակումը հանրապետական սփռում ունեցող հեռուստաալիքով;
- Նկարահանումները և մոնտաժը պետք է կատարվեն թվային տեխնիկայով, պրոֆեսիոնալ մակարդակով, նյութը մատուցվի գրագետ, մատչելի և հետաքրքիր ոճով;
- Հաղորդաշարը պետք է ունենա կայուն պարբերականություն և տևողություն, հեռարձակվի կայուն եթերաժամի՝ թիրախային շահառուների համար ընտրված հարմար ժամի;
- Բացի Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի (ՈՀԲԾ) ընթացիկ աշխատանքների լուսաբանումից, հաղորդաշարում պետք է նաև ջրօգտագործողների պարբերական իրազեկման բաղադրիչներ լինեն:

Ենթադրվում է, որ խորհրդատվական ծառայությունները կսկսվեն **2014թ. ապրիլին**: Հանձնարարության տևողությունը մոտ **24 (քսանչորս) ամիս** է՝ պայմանագրի ստորագրման պահից:

Խորհրդատուի ընտրությունն իրականացվելու է "**Անհատ Խորհրդատուների Ընտրության"** մեթոդով, որը սահմանված է Համաշխարհային Բանկի

ուղեցույցներում՝ *«Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎՁՄԲ-ի փոխառությունների և ՄՁԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, Հունվար 2011»* («Խորհրդատուների Ուղեցույցներ»):

Խորհրդատուի որակավորումը պետք է բավարարի ստորև բերված պահանջները, բայց չսահմանափակվի դրանցով.

- բարձրագույն կրթություն;
- հեռուստատեսային բնագավառում առնվազն 10 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ;
- մասնագիտական ոլորտում՝ ժամանակակից տեխնոլոգիաների և համակարգչային ծրագրերի գերազանց տիրապետում;
- գրավոր և բանավոր խոսքի գերազանց ունակություններ;
- գերազանց հայերենից բացի՝ ցանկալի է օտար լեզուների իմացություն:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեով աշխատանքային ժամերին՝ **ժ.10:00–17:00, երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ, բացի հանգստյան օրերից**:

Շահագրգիռ անձինք իրենց դիմումները՝ ինքնակենսագրական տվյալներով (CV), հայերեն լեզվով՝ վավերացված տպագիր օրինակներով կամ էլ-փոստով՝ **Adobe PDF** կամ այլ ձևաչափով, կարող են ուղարկել ստորև նշված հասցեով **մինչև 2014թ. մարտի 11–ը, ժամը 17:00**:

«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
Պրն. Ադիբեկ Ղազարյան, տնօրեն
Տկն. Մարգարիտա Սարգսյան, կոմունիկացիայի մասնագետ
Պրն. Մարտին Չարյան, գնումների մասնագետ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0033, Բաղրամյան փ. 75/44
Հեռ՝ (+37410) 277-943 (ընդունարան), 266-058 (գնումների բաժին)
Ֆաքս՝ (+37410) 266-058
էլ. փոստ՝ aghazaryan@wsdp.am; cc: msargsyan@wsdp.am; mcharyan@wsdp.am;

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Մարգարիտա Սարգսյանին՝ (374 10) 275-475, 091-47-98-34, ժամը 10.00-ից մինչև 17.00-ը (աշխատանքային օրեր)